

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Х. Кучукъ-Іоаннесовъ. Краткій очеркъ армянской литературы V вѣка. Москва, 1914.

Ե. դարի հայ գրականութեան մի տեսութիւն է այս գրքոյ-
կը, որի հեղինակի նպատակն է թերեւս ուրիշ ընթերցողին ծանո-
թացնել «Ս. Սահակի և Մեսրոպի հետևողների» հետ: Կենսագրա-
կան նօթեր թարմանիչների մասին և նրանց երկերի բովանդա-
կութիւնը—ահա սակայն այդ էջերի նիւթը:

Զաւիագանց համառօտ է այս տեսութիւնը: Ս. Սահակի ու
Մեսրոպի աշակերտների սոսկական յիշատակումից ուրիշ ընթեր-
ցողը չի կարող պարզ գաղափար կազմել Գրերի գիւտի ու Ոսկե-
դարի մեր կեանքի ու գրականութեան վրայ ունեցած ազդեցու-
թեան—նշանակութեան մասին: Ի՞նչ պատճառների ծնունդ էր
Գրերի գիւտը և ի՞նչ նպատակների ծառայեց, ի՞նչ էր-ժամանակի
ոգին, ի՞նչ է նշանակում Ոսկեդար կոչումը, ի՞նչու մն է նրա ա-
ռանձնայատուկ դիրքը—խնդիրներ են, որոնք գոնէ թեթևակի
պիտ ուրուագծուէին գրականութեան թէկուզ համառօտ տեսու-
թեան մէջ: Իսկ մատենագիրների երկերի գնահատութիւնը, պատ-
մագրելու եղանակը, լեզուն, ոճը, ոգին ևլն—նման հարցեր բնաւ
արծարծուած չեն: Միայն Խորենացու համար է յիշուած արդի
քննադատութեան կասկածը նրա Ե. դարի հեղինակ լինելու մա-
սին. նոյնը պիտի արուէր և Դաւիթ Անյաղթի, Եղիշէի ու Մամբրէ-
Վերծանողի նկատմամբ, որոնց յիշեալ դարի պատկանելն ևս
քննադատութեան է ենթարկուած:

Հաճելի տպաւորութիւն է թողնում գրքոյկում յիշատակուած
հեղինակների ևրոպական լեզուներով թարգմանուած գործերի լրիւ
ցուցակը, որը սակայն luxe է այսպիսի մի համառօտ տեսութեան
համար:

Վ. Տ. Յ.